

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2013 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՎՅԱԼՆԵՐ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՎՅԱԼՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ ռեգիստր) Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող տվյալները, դրանց տրամադրման կարգը և ժամկետները:

2. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները տվյալները ստանում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարաններից (այսուհետ՝ մարզպետարան):

3. Ռեգիստրը յուրաքանչյուր կիսամյակից հետո 5-րդ աշխատանքային օրը մարզպետարանին է տրամադրում յուրաքանչյուր համայնքի ռեգիստրում հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) համայնքում հաշվառված անձանց անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն.

2) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

3) անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ սերիան և համարը, հաշվառման օրը, ամիսը, տարին, անձնագիրը տվող մարմնի ծածկագիրը, վավերականության ժամկետը.

4) քաղաքացիությունը (երկքաղաքացիության դեպքում՝ նաև այլ պետության քաղաքացիությունը).

5) կարգավիճակը (կացության կարգավիճակը կամ փախստական լինելը).

6) հաշվառման ամսաթիվը.

7) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ քրեակատարողական հիմնարկում գտնվելու դեպքում՝ նշում դրա մասին:

4. Ռեգիստրը յուրաքանչյուր կիսամյակից հետո 5-րդ աշխատանքային օրը մարզպետարանին է տրամադրում յուրաքանչյուր համայնքի ռեգիստրի հաշվառումից հանված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) համայնքում բնակության վայրի հասցեով հաշվառումից հանված անձանց (այդ թվում՝ անչափահաս) անունը, ազգանունը, հայրանունը

2) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

3) հաշվառումից դուրս գալու ամսաթիվը.

4) հաշվառումից դուրս գալու պատճառը:

5. Սույն կարգով սահմանված տվյալները, իսկ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նպատակով լրացուցիչ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ նաև այլ տվյալներ, ըստ համայնքների, համապատասխան մարզպետարաններին տրամադրում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը՝ էլեկտրոնային կրիչներով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՎՅԱԼՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Վերջին տարիների ՀՀ համայնքներից ստացվում են դիմումներ՝ համայնքներում հաշվառված քաղաքացիների անհատական հաշվառման տվյալների մասին տեղեկատվության տրամադրման միջնորդելու խնդրանքով: «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների՝ անհատական տվյալները միմյանց փոխանցելու կարգը սահմանվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:» Սակայն նման կարգ դեռևս մշակված չէ: Մասնակիորեն այդ գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N1231-Ն որոշմամբ, որի 2-րդ կետում սահմանված է, որ «Կենտրոնական և տեղական ռեգիստրները քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, իրավապահ, մաքսային, հարկային և անշարժ գույքի կադաստրի մարմիններին են տրամադրում գրավոր կամ բանավոր հարցման դեպքում:» ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ֆիզիկական անձանց հաշվառման հասցեների վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելու կապակցությամբ որևէ խոչընդոտ չի ստեղծվել: Խնդիրներ են առաջանում այն հարցումների դեպքում, երբ վերջիններս կրում են ոչ անհատական բնույթ (օրինակ, մինչև 15 տարեկան արական սեռի ներկայացուցիչների վերաբերյալ որոշակի տվյալներ) և դրանցով պահանջվում են որոշակի ժամկետներում հաշվառումների վերաբերյալ տեղեկություններ, որոնց տրամադրումը կանոնակարգված չէ:

Համայնքի բնակիչների հաշվառման վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունը խոչընդոտում է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացմանը (աղբահանության, սոցիալական ծառայության կազմակերպման, նախազորուկոչիկների հաշվառման բնագավառներում և այլն):

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Ներկայացվող նախագծով առաջարկվում է հաստատել ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգ, սահմանվում են համայնքի ռեգիստրում հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված (հաշվառումից հանված) անձանց վերաբերյալ տվյալների ցանկը և դրանց տրամադրման պարբերականությունը, ինչպես նաև տվյալների տրամադրման շղթան և եղանակը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ ԿԱ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն:

4. Ակնկալվող արդյունքը

Ներկայացվող նախագծի ընդունմամբ կկանոնակարգվեն բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող տվյալները, դրանց ցանկը և ժամկետները: